ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար համար ծրարների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «08» հուլիսի 2021թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Եղիազարյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետ.

հանձնաժողովի անդամներ՝

Արմինե Ալիխանյան՝ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար,

Հայկ Սարգսյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ.

Նիստից բացակայում էր հանձնաժողովի անդամ Էդգար Տոնականյանը՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար:

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/08» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

1.1 հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 7-րդ օրվա (06.07.2021թ.) ժամը 15:00-ն,

1.2 հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,

1.3 էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 07.07.2021 թ., ժամը 15:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ.

2.1 Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Գնվելիք ապրանքի անվանումը	Գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	Նամակի ծրար A5 ձևաչափի	6 758 700
2	Նամակի ծրար A4 ձևաչափի	3 744 000
3	Նամակի ծրար A3 ձևաչափի	3 470 880
4	Ծրար (Eurostandard)	12 011 648

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով, հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

N	Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
1	<<ՖՈՐՏՈՒՆԱ ՍԻԹԻ>> ՍՊԸ	ք.Գորիս, Տաթևացի 31/1
2	Ա/Ձ <<ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ>>	ք.Գորիս, Մ.Խորենացու 24

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

4.1 Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ ստացված հարցումների և տրամադրված պատասխանների մասին.

5.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

6.«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/08» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	<<ՖՈՐՏՈՒՆԱ ՍԻԹԻ>> ՍՊԸ	6758700	0 %	6758700	6758700	0 %	6758700	
1	Ա/Ձ <<ՕՖԵԼՅԱ	7209280	20 %	8651136	7209280	20 %	8651136	Մերժված

	ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ>>							
2	<<ՖՈՐՏՈՒՆԱ ՍԻԹԻ>> ՍՊԸ	3744000	0 %	3744000	3744000	0 %	3744000	
2	Ա/Ձ <<ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ>>	3900000	20 %	4680000	3900000	20 %	4680000	Մերժված
3	Ա/Ձ <<ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ>>	3615500	20 %	4338600	2856245	20 %	3427494	
3	<<ՖՈՐՏՈՒՆԱ ՍԻԹԻ>> ՍՊԸ	3470880	0 %	3470880	3470880	0 %	3470880	
4	<<ՖՈՐՏՈՒՆԱ ՍԻԹԻ>> ՍՊԸ	12011648	0 %	12011648	12011648	0 %	12011648	
4	Ա/Ձ <<ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ>>	13513104	20 %	16215724.8	13513104	20 %	16215724.8	Մերժված

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 07.07.2021թ.՝ ժամը 15:32-ին, և Համակարգի կողմից առաջին տեղն զբաղեցրած մասնակիցներ են համարվել՝

- 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով <<ՖՈՐՏՈՒՆԱ ՍԻԹԻ>> ՍՊԸ-ն,
- 3-րդ չափաբաժնի մասով <<ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ>> Ա/Ձ-ն:

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի /դիմում-հայտարարությունների/ առկայության մասին.

7.1 <<ՖՈՐՏՈՒՆԱ ՍԻԹԻ>> ՍՊԸ-ի և <<ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ>> Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը /էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունները/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

8.1 <<ՖՈՐՏՈՒՆԱ ՍԻԹԻ>> ՍՊԸ-ի և <<ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ>> Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտերում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունները (Հավելված 1) և Համակարգում մուտքագրած (լրացրած) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

9. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի վերաբերյալ.

9.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով <<ՖՈՐՏՈՒՆԱ ՍԻԹԻ>> ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 3-րդ չափաբաժնի մասով <<ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ>> Ա/Ձ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 3-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակցի՝ <<ՖՈՐՏՈՒՆԱ ՍԻԹԻ>> ՍՊԸ-ի հայտը մերժել:

9.2 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով <<ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ>> Ա/Ձ-ի՝ աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գները, ուստի նշված չափաբաժինների մասով <<ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ>> Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը Համակարգի կողմից համարվել է մերժված:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

10. Հանձնաժողովը որոշեց գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել համապատասխան պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Արթուր Եղիազարյան

Անդամներ՝ _____ Արմինե Ալիխանյան

_____ Հայկ Սարգսյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝ _____ Մարիամ Հայրապետյան